

ՏՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ
(ԳԵՐՄԱՆԵՐԵՆ - ՀԱՅԵՐԵՆ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ)

Հասկացութաբանությունը ժամանակակից ճանաչողական լեզվաբանության ենթագիտակարգերից է, որը ձևավորվել է խնդրալից դարի վերջերին: Գոյություն ունեն հասկացության բազմաթիվ բնորոշումներ, սակայն գրեթե բոլոր լեզվաբանները միակարծիք են նրանում, որ հասկացությունը պայմանական մտային կառույց է և ունի ճանաչողական նշանակություն, ուստի գոյություն չունի մտածողությունից դուրս: Ըստ Ստեփանովի՝ «Հասկացությունը մշակույթի միկրոկադապար է, որը մշակույթ է սերում և իր հերթին սերվում է մշակույթի կողմից: Հասկացությունը մշակույթի ելակետային միավորն ու թանձրուկն է»:

Հասկացությունները զլխավորապես լուսաբանվում են բառային կամ դարձվածաբանական մակարդակում, սակայն սույն հոդվածում փորձ է արվել հասկացությունը ներկայացնել ձևաբանական մակարդակում, ինչը *տուն* հասկացության վերլուծությունն ավելի լիարժեք և ամբողջական կարող է դարձնել:

Ըստ Հրաչյա Աճառյանի՝ տուն-ը բնիկ հայերեն բառ է, հնի. *dom* ձևից: Հայերենը ժառանգել է այն սանսկրիտից, *dama*, *mana*-տուն, *nomana*-տուն, բնակարան, լատիներեն-*domus*, հարավսլավերեն-*domu*, ռուսերեն- *домъ*, չեխերեն- *dum*, գնչուերեն- *tan*, լիթվերեն- *dimstis*, որը բալ է նշանակում, բոլորը ծագում են *dom-*, *demi-*, *dom-*, *demi-*, *dema* արմատից, որը նշանակում է «շինել», «կառուցել»: Գոթերենում պահպանվել է *timorjan*, հոլանդերեն *timmeren*, հին վերին գերմաներենում *zimberen*, գերմաներենում *zimmern* «շինել», այսօրվա գերմաներենում արդեն՝ *Zimmer* «սենյակ»: Թուրքերենում *dam* կտուր է նշանակում, պատահականորեն նման է նաև չինարեն *tien*-տուն ձևը:¹ Գերմաներենի *Haus* բառույթը ծագել է հին վերին գերմաներենի *hūs* արմատից, որ նշանակել է շինություն, շինության բնակչներ, ընտանիք: Միջին վերին գերմաներենում նույն *hūs* արմատը նշանակել է շինություն, բնակարան, խրճիթ, ամրոց, ընտանիք, խորհրդարան, հին սաք-

¹ Степанов 2001. 43

² Աճառյան Հր. Երևան. 1979. 427-429

սունքներնում և հին անղլերենում ևս *hūs*, այնուհետև *huus*, *huis* և վերջապես անղլերենում՝ *house*, իսկ գերմաներենում՝ *Haus*: **Häuschen** (տնակ) հին վերին գերմաներենում հանդիպում է *hūsili* (8-րդ դար), այնուհետև *hūsil* (13-րդ դար), *միջին վերին գերմաներենում՝ hūselin, hūsel*, իսկ 1800-ականներին հանդիպում է արդեն Häuschen ձևը:³

Ցանկացած լեզվի բառային համակարգ կարելի է ներկայացնել տարբեր իմաստային դաշտերի ստորակարգության միջոցով: Եթե սկզբնական շրջանում իմաստային դաշտի մեջ միայն բառերն էին ընդգրկվում, ապա ավելի ուշ շրջանի լեզվաբանական աշխատություններում ընդգրկվեցին նաև բառակապակցություններն ու արտահայտությունները: Իմաստային դաշտն իրենից ներկայացնում է **միջուկի, կենտրոնի և եզրային գոտու** միասնություն: Դաշտի անսիմիոխակ նշանակությունը մի բառի մեջ է ամփոփված, որն իմաստով իրեն ավելի մոտ հոմանիշների հետ միասին կազմում է դաշտի միջուկը: Սորոկինյան իմաստային դաշտը բնորոշում է հետևյալ կերպ՝ «Յուրաքանչյուր հասկացույթ ունի միջուկ և եզրային գոտի, վերջինս էլ իր հերթին բաժանվում է *մոտակա, միջին և հեռավոր* գոտիների: Միջուկը կազմված է լեզվակրի գիտակցության մեջ հասկացույթի հանդես բերած ամենավառ հատկանիշներից, այնուհետ այդ աստիճանակարգությունը կառուցվում է ըստ հատկանիշի արտահայտվածության նվազման»:⁴

Տուն հասկացույթի իմաստային դաշտը կազմող ձևաբանական մակարդակի միավորները գտնվում են նրա **մերձմիջուկային գոտում**: Դրանք անմիջականորեն կապված են հասկացույթի միջուկի հետ՝ որպես նրա բառակազմական և ձևակազմական ածանցյալներ: «Բառակազմական և ձևաբանական ածանցյալ միավորների ներառումն ուսումնասիրության դաշտ թույլ է տալիս ավելի խորությամբ ներկայացել տվյալ հասկացույթի դրսևորած իմաստների ամբողջությունը»:⁵ Ձևակազմությունը հետաքրքրական է այնքանով, որ ևույն բառույթը հանդես բերելով տարբեր իմաստներ, քերականական ձևեր կազմելիս կարող է հանդես բերել որոշակի սահմանափակումներ: Այս առանձնահատկությունը բնորոշ է նաև **տուն** բառույթին: Այսպես, օրինակ, **տուն** բառույթը «**շենք, շինություն**» իմաստով թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում կարող է թեքվել հոլովական ողջ հարացույցով, մինչդեռ «**ցեղ**» կամ «**տնտեսություն**» իմաստներով **տուն**-ը հոգնակի թիվ հանդես չի բերում: Իմաստներով պայմանավորված սահմանափակումներ կան ոչ միայն քերականական ձևերի կազմության, այլև բառակազմության ժամանակ:

³ <http://www.dwds.de/?gu-ham&view=1>

⁴ Сорокина А. В., 2010, 143

⁵ Полова, Стернин, 2001, 129

Գերմաներենի **nach Hause/heim** և հայերենի (դեպի)տուն ձևերն իրենց մեջ ունեն «ուղղություն դեպի նպատակակետ» իմույթը, իսկ **zu Hause/daheim** և **տանը** համապատասխանաբար «գտնվելու տեղ» իմույթը: Գերմաներենում **zu Hause** քարացած արտահայտություն է, որտեղ **Haus** գոյականը երթադրում է տրական հոլով: Լեզվի խնայողական զարգացման միտումներով պայմանավորված նախդիրը կարող է ձուլվել գոյականի հետ՝ արդյունքում ձևավորելով նոր *das Zuhause* բառույթը, որը հոմանիշ է գոյականացված *das Daheim* մակբային *իր անկյունը, հայրենի օջախ, հարազատ տուն* իմաստներով: Որոշ լեզվաբանների կողմից ձուլված և փոքրատառով *zuhause* ձևը դիտարկվում է անցամ-որպես մակբայ: «*Zuhause*» ձևը, թերևս, ավելի շատ ավստրիական և շվեյցարական գերմաներենին է բնորոշ:⁶ Գերմաներենի *daheim* մակբայը՝ *տանը, բնակարանում, հայրենիքում, հարազատ վայրերում* նշանակությամբ, ծագել է միջին վերին գերմաներենի *da heime*, հին վերին գերմաներենի *dar heime* ձևերից: Տեղի *da* մակբայը ավելի հաճախ հանդիպում է միջին վերին գերմաներենում, որը ժամանակակից գերմաներենում ամրագրվել է ավելի շատ տեղի իմաստով⁷: Գերմաներենում մակբայացած *zu Hause*-ն օգտագործվում է այնպիսի բայերի հետ, ինչպես՝ *bleiben, sein, sich befinden* և այլն, իսկ *Haus* բառույթը *mieten, vermieten, hüten, kaufen, verkaufen, bewohnen, bauen, abreissen, betreten, errichten, wiederaufbauen, besitzen, erwerben*⁸ և այլ բայերի հետ:

Հայերենում **տանը** տեղի տրականով դրված բառաձևը ցույց է տալիս գործողության կատարման տեղը (իմաստային տեսանկյունից տեղի տրականը նույնական է ներգոյականին):⁹ **Տանը** բառաձևը հիմնականում օգտագործվում է այնպիսի բայերի հետ, ինչպես *լինել, մնալ գտնվել*, որոնք ընդգծում են գտնվելու տեղը, իսկ **տուն** բառույթը՝ *անել, գնալ, զգել, բերել, դառնալ, դնել, թողնել, լքել, տալ, տանել* բայերի հետ¹⁰, որոնք ընդգծում են շարժման իմաստը: Հայերենում ինչպես **տուն**, այնպես էլ **տանը** ձևերը դիտարկվում են գոյական խոսքի մասի մեջ որպես հարացույցի բառաձևեր: Հարկ է նշել, որ բացի ուղղական և սեռական հոլովներից մյուս հոլովներում **տուն** գոյականը կարող է ունենալ պարագայական կիրառություն: Սակայն բուն պարագա համարվում են միայն մակբայներով ձևավորված պարագաները:

⁶ Duden, 1996, 1793

⁷ Kluge 2002, 177

⁸ <http://www.dwds.de/?qu=haus&view=1>

⁹ Աբրահամյան Ս. Գ. 1975, 54

¹⁰ Էդ. Աղայան, 1976, 1463

Երբ գերմաներենում «ուղղություն դեպի նպատակակետ» իմաստն արտահայտվում է *heim* մակբայով, սպա նրան կարող է որպես վերջին բաղադրիչ միանալ ցանկացած շարժում ցույց տվող բայ կազմելով բարդ բայեր, ինչպես *heimfahren, heimgen, heimkommen, heimreisen, heimkehren* (տուն գնալ կամ հայրենիք վերադառնալ և այլն):

Գերմաներենում **Haus** հասկացությոը հետևյալ ածականների հետ կազմում է կոլոկացիաներ՝ *ein grosses* (մեծ), *mehrstöckiges* (բազմահարկ), *neues* (նոր), *stattliches* (մեծ և էլեգանտ), *modernes* (ժամանակակից), *ruhiges* (հանգիստ), *wohnliches* (բնակելի), *hässliches* (տգեղ), *baufälliges* (խարխուլ), *leeres* (դատարկ), *verlassenes* (լքված), *zerbombtes* (ոմբակոծված), *abgetrenntes* (առանձնացված) **Haus**: Տունը որոշ բայերի հետ ստացել է արտահայտության արժեք, որոնք ձեռք են բերել փոխաբերական իմաստ, ինչպես օրինակ, *տանը մնալ*՝ չամուսնանալ (չափահաս աղջիկների մասին), *տուն տանել*՝ ամուսնացնել, *տուն գցել*՝ սեփականացնել, *տուն պահել*՝ տան հոգսը հոգալ, *տուն տալ*՝ վերքը թարախակալել և այլն:

Շենք, շինություն իմաստով **Haus**-ը ներկայանում է բառակազմական և բառաձևակազմական մեծ հնարավորություններով, օրինակ *das Häuschen, das Hauslein, das Riesenhaus*: Գերմաներենում *-chen* և *-lein* նվազական վերջածանցները ոչ միայն «ոչ մեծ» իմաստային երանգն են հաղորդում բառին, այլև (եթե գոյականն արդեն իսկ չեզոք սեռի չէ) փոխում են գոյականի քերականական սեռը չեզոք սեռի: Հայերենում նույն իմաստն արտահայտվում է *-ակ*, *-իկ* ածանցներով, որոնք սակայն ձևաբանական տեսանկյունից նոր որակ չեն տալիս: *Տնակ* և *տունիկ* բառույթները երկուսն էլ ունեն «ոչ մեծ» իմաստային բաղադրիչը, բայց մինևույն ժամանակ ունեն իմաստային նրբերանգներ: *Տնակ* ասելիս մտածում ենք փոքր տան մասին, ինչպես որ տունտուլակ, տունտուլիկ, տունտունճիկ, տունտունակ¹¹ բարբառային ձևերն են, իսկ *տունիկ*-ը գուզորդվում է խաղալիքի հետ: *Riesenhaus* բառը հայերեն թարգմանվում է որոշով ուղեկցվող գոյականով՝ *հսկայական/մեծ տուն*: Հայերենում *տուն* հասկացությի ձևաբանական նոր դրսևորումներ են հանդիսանում *-ական, -ային, -եր* վերջածանցներով բառաձևերը: Ընդ որում *-եր* վերջածանցը հաղորդում է միայն հոգնակի թվի քերականական իմաստ, մինչդեռ *-ային* և *-ական* ածանցները՝ բառակազմական և քերականական միաժամանակ:

Haus-ի «նույն կացարանում բնակվող մարդիկ» իմաստային միկրո-դաշտը գերմաներենում լրացվում է նաև (*Haus*)*angehörige* գոյականացված ածականով: Նույն կերպ լրացվում է նաև «ընտանիքի անդամներ» միկրո-

¹¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, 540

դաշտը, որն իր մեջ ունի «համատեղ կեցություն», «տարածական մոտիկություն» իմույթները:

Բառարանային վերլուծությունները (Duden 1989, Duden 2006, Pfeifer (Etymologisches Wörterbuch), Wahrig 1997, Langenscheidts 1997, <http://woerterbuchnetz.de/>) հնարավորություն են տալիս դուրս բերել **Haus** բառույթից ածանցված, ինչպես նաև բարդ բառերի մի ամբողջ շարք, որոնք ձևաբանական մակարդակում ամբողջացնում են այդ հասկացության դրսևորումները: Միայն Փֆայֆերի բառարանում **Haus** հասկացույթը ներկայացվում է ավելի քան 30 բառակազմական օրինակով, ինչպես՝ *das Häuschen-տնակ, hausen-վատ պայմաններում ապրել, behausen-բնակեցնել, die Behausung-խղճուկ կացարան, unbehaust-չբնակեցված, hausieren-տնետուն գնալ ձեռքի իրերը վաճառելու նպատակով, der Hausierer-տնետուն գնացող՝ որն է իր վաճառելու նպատակով, häuslich-տնավարի, die Häuslichkeit-տնավարիություն, die Hausmannskost-պարզ/հասարակ կերակուր* և այլն:

Բավական մեծ թիվ են կազմում տուն բաղադրիչով բարդ բառերը *անձ կամ մասնագիտություն* իմաստային խմբերի բառերի համադրությամբ (այն ներկայացվում է ավելի քան 40 օրինակով)՝ *das Fischerhaus-ձկնորսական տուն, das Herrenhaus-իշխանական տուն, das Hochzeitshaus-հարսանեկան արարողությունների տուն, das Sterbehaus-տուն, որտեղ մահամերձին օգնում են իր վերջին օրերին, das Trauerhaus- հուղարկավորությունների տուն* և այլն¹²:

Հայերենում նույնպես տուն հասացույթն ունի բառակազմական մեծ ներունակություն: Աճառյանի կողմից հիշատակված հետևյալ բարդ բառերում տուն-ը հանդես է գալիս որպես երկրորդ բաղադրիչ՝ *մեծատուն, ձմերաստուն, գետնատուն, սալլատուն, կրակատուն, միջնատուն, ներքնատուն, սակավատուն, վերնատուն, վաչկատուն, թոքատուն, տնտեսատուն* և այլն: Առաջին դիրքում տուն բաղադրիչի ու ձայնավորը հիմնականում սղվում է, և բավական հաճախադեպ է *ա* հոդակապի առկայությունը, ինչպես *տնակից տնակալ, տնամերձ, տնաշեն* և այլն: Ի տարբերություն գերմաներենի՝ հայերենում տուն-ը բառի կազմում կարող է հանդես գալ նաև թեքված ձևերով, օրինակ՝ *տանուտեր, տաներես, տանեստան, տանիք, ընտանի* և այլն: Նշենք նաև, որ գերմաներենում **Haus**-ը բառակազմական կաղապարներում, որպես կանոն, գրեթե հնչյունափոխության չի ենթարկվում: Դ.Գյուրցինյանն իր «Տուն վերջնաբաղադրիչով բաղադրությունները» հոդվածում անդրադառնալով տուն վերջնաբաղադրիչ ունեցող բարդ բառերին՝ նշում է, որ հայերենում ձևավորվել է համադրական բաղադրյալ

¹² Etymologisches Wörterbuch - DWDS Pfeifer

մի տեսակ, որի հիման վրա ստեղծված բառեր կան վկայված հայերեն դեռևս առաջին հուշարձաններում: Հեղինակը նշում է «Ա+տուն» կադապարով բազմաթիվ բարդություններ, ինչպես օրինակ՝ գրատուն, գործատուն, գինատուն, հյուրատուն, մաքսատուն, պահակատուն, վերնատուն, դեղատուն, գինետուն, փոշետուն, այգետուն և այլն¹³:

Գերմաներենում **տուն**-ը որպես բարդ բառերի երկրորդ բաղադրիչ հիմնականում պահպանում է շենք, շինություն իմաստը, իսկ որպես առաջին բաղադրիչ հանդես է բերում բազմիմաստություն, ինչպես օրինակ, *hausieren* (իրեր վաճառել՝ տնից տուն գնալով), *Haushalt*(կենցաղ, նաև բյուջե), *Haushälterin*(տնտեսուհի):

Գերմաներենում **Haus**-ը որպես բարդ գոյականների առաջին բաղադրիչ որակվում է ինչպես *Bestimmungswort* (որոշիչ բառ), որը վերլուծության դեպքում վերածվում է *Genitivattribut*-ի (հատկացուցիչ), օրինակ *Haustür – Tür des Hauses* (տան դուռ): Հայերենում բարդությունների եզրերի միջև գոյություն ունի երկու կարգի ստորադասական հարաբերություն՝

ա) հատկացուցիչ-հատկացյալի, օրինակ՝ *հարսանքատուն* (հարսանիքի տուն), բ) որոշիչ-որոշյալի, օրինակ՝ *հողատուն* (հողե տուն):¹⁴

Haus բառույթով կազմված բոլոր բառերը չէ, որ ունեն համարժեք թարգմանություն հայերենում: Այս դեպքում մենք գործ ունենք բառային լակունաների հետ, որոնք հաճախ բացատրվում ենք նկարագրական եղանակով: Այդպիսի օրինակներ են՝ *Einfamilienhaus* (մեկ ընտանիքի բնակության համար նախատեսված տուն), *Zweifamilienhaus* (երկու ընտանիքի բնակության համար նախատեսված տուն), *Fachwerkhhaus* (արտաքինից փայտե գերանները տեսանելի տուն), *Sterbehaus* (տուն, որտեղ մահամերձին օգնում են իր վերջին օրերին) և այլն:

Գերմաներենի **Heim** բառույթը «Գնակարան», «հարազատ տուն» իմաստով (պաշտպանվածության, հաճելի ընտանեկան հարմարավերության տեսանկյունից)¹⁵ հոմանիշ է *das Zuhause* բառույթին, որն ունի ընտանեկան օջախ, հարազատ տուն իմաստները: Այսպիսով, *das Zuhause* բառույթը հանդիսանում է **das Haus** բառույթի դերիվատը և մտնում է **Haus/Heim** հասկացույթի նախամիջուկային շերտի մեջ: **Das Heim** բառույթը գերմաներենի **Haus** հասկացույթի մակրոդաշտի շատ կարևոր միկրոդաշտ է, որի իմաստային հարացույցը ամբողջանում է նաև «հասարակական կազմակերպություն, հաստատություն» իմաստով, ինչպես, *Erholungsheim* (հանգստյան տուն), *Kinderheim* (մանկատուն), *Sozialheim* (հաշմանդամների տուն),

¹³ . Գյուրջիսյան Դ, 1991, N2 (133)

¹⁴ Գյուրջիսյան Դ, 1991, N2 (133), էջ 155

¹⁵ Duden, 1989, 680

Altersheim (ծերակոց), *Entbindungsheim* (ծննդատուն) և այլ օրինակներում: Վերը նշված բառերում **-heim** բաղադրիչը օգնում է ազատվել որոշ բացասական գուգորդումներից, քանի որ սոցիալական ինստիտուտն այդ բառով անվանելը «հարմարավետություն», «պաշտպանվածություն», «անվտանգություն» ճանաչողական կոնոտացիաների միջոցով բացասական հարանշանակությունները համահարթելու փորձ է: Հայերենում այս իմաստներն արտահայտվում են տուն բառով կամ *-անոց* ածանցով, ինչպես օրինակ, *ծննդատուն*, *մանկատուն* կամ *ծերանոց*, *հիվանդանոց* և այլն: Հայերենում **տուն** հասկացությո՞ղ հատկապես **օջախ** իմաստով կարևորվում է նաև զգայական տեսանկյունից: Ի հակադրություն շրջապատող աշխարհի սառնությանը, անտարբերությանը և երբեմն անզամ թշնամանքին **տուն**-ը լցված է ջերմությամբ, հարմարավետությամբ, սիրով և ոգեղենությամբ: Ասվածի վառ օրինակ կարող են ծառայել **տնաշեն** և **տնաքանդ** հասկացությունները: *Տնաշեն* արտահայտությունն անում ենք, երբ մեզ սիրելի, մտերիմ մեկին ուզում ենք հանդիմանել, բայց միևնույն ժամանակ չվիրավորել: *Տնաքանդ*-ը *տնաշենի* հակակշիռն է: Այս հանդիմանական կոչականներն իրենց հիմքում ունեն **տուն շինել** և **տուն քանդել** փոխաբերական արտահայտությունները: Հայ մշակույթում առաջինը գուգորդվում է ամենադրական հատկանիշների, իսկ վերջինը՝ ամենաբացասականի հետ: *Տուն քանդվելը* հայի գիտակցության մեջ կապվում է թերևս սարսափելի փորձանքի, աղետի կամ մեծ կորստի հետ:

Այսպիսով, **Տուն** հասկացությի իմաստային դաշտը կազմող ձևաբանական մակարդակի միավորները գտնվում են նրա մերձմիջուկային գոտում՝ գերմաներենում դրանք *Zuhause* և *Heim*, իսկ հայերենում **օջախ** բառայությունն են: **Տուն** հասկացությո՞ղ երկու լեզուներում էլ քերականական ձևեր կազմելիս կարող է հսկողես բերել որոշակի սահմանափակումներ՝ պայմանավորված իմաստով: Երկու լեզուներում էլ **տուն** հասկացությո՞ղ շենք, շինություն իմաստով բառակազմական և բառաձևակազմական առումով ավելի լայն հնարավորություններ է ընձեռում, քան այլ իմաստներով: Հայերենում *-ակ* ածանցը միայն **փոքր տուն** հավելյալ իմաստն է հաղորդում, այն դեպքում, երբ դրան համարժեք *-chen* և *-lein* մանիկները գերմաներենում ոչ միայն իմաստային, այլ նաև ձևաբանական տեսանկյունից բառին նոր օրակ են հաղորդում:

Haus-ը գերմաներենում ավելի հաճախ է հանդիպում բարդ բառերում, որը բացատրվում է սակայն ոչ միայն հենց այս հասկացությի կիրարկելությամբ, այլ նաև գերմաներենի կառուցվածքային և հատկապես բառակազմական հնարավորություններով: **Haus** բաղադրիչով բազմաբանակ բարդ կամ ածանցավոր բառեր հայերենում արտահայտվում են բառա-

կապակցություններով: Երկու լեզուներում էլ տուն-ը կարող է հանդես գալ որպես բարդության առաջին բաղադրիչ, ընդ որում գերմաներենում որպես կանոն **Haus** բաղադրիչը պահպանում է իր ուղիղ ձևը՝ մինչդեռ հայերենում հաճախ սղվում է արմատի ձայնավորը:

Գերմաներենում *nach Hause* և *zu Hause* արտահայտությունները որպես քարացած արտահայտություններ օգտագործվելու արդյունքում մակբայացման միտում են դրսևորում: Հայերենում տուն բառույթը որոշ բայերի հետ հարադիր բարդություններ է կազմում, որոնք հանդիպում են խոսքում թե՛ ուղիղ և թե՛ փոխաբերական իմաստներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա. Հայոց լեզու. 2-րդ մաս, շարահյուսություն, Լույս հրատ., Երևան 1975, էջ 50-52
2. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան 1-4 հ հ. Եր., 1979. 427-429
3. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, 1976, էջ 829, 1463
4. Գյուրջիյան Դ. Ս. «Տուն» վերջնաբաղադրիչով բարդությունները, 1991, N2 (133), Երևան. պատմա-բանասիրական հանդես
5. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, ՀՍՍՀ ԳԱ Ակադեմիա, Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, 1980, հատոր 4, էջ 540
6. Сорокина А. В. Концепт в системе культуры: философский, культурологический, лингвокогнитивный подходы. УДК 130.2. 2011 г., 143
7. Попова З. Д., Стернин И. А. Очерки по когнитивной лингвистике/31 Воронеж. 2001. 129 с.
8. Duden Deutsches Universalwörterbuch 3., neu bearbeitete Auflage Mannheim. Leipzig. Wien. Zürich. 1996, seite 672
9. Langenscheidts Grosswörterbuch, Dieter Götz, Gunther Haensch, Hans Wellmann Berlin. München. Wien. Zürich. New York, 1997. Seite 448
10. Wahrig Deutsches Wörterbuch, Bertelsmann Lexikon Verlag, Gütersloh, 1997, Seite 608
11. Kluge. Etymologisches Wörterbuch der deutschen Sprache. Bearbeitet von E. Seebold. 24: durchgesehene und; erweiterte Auflage./ Walter de Gruyter, Berlin/ New York 2002,- Seite 177

Էլեկտրոնային կայքեր

Etymologisches Wörterbuch - **DWDS**

<http://www.dwds.de/>

In this article the concept of «home» is compared in the morphological levels of German and Armenian languages. First, it is obvious that there are some limits in forming the grammatical forms of the word «home» which depends on the meaning. For example, in the meaning of «building, apartment» the word «home» has the whole system of conjugation both in singular and plural, but in the meaning of «tribe, economy» it also has the whole system of conjugation, but the plural form is not typical. In German and Armenian languages the word «home» can be used in compound words both as a first and as a second component. In forming compound words there is no sound change in German, while in Armenian there occurs a sound change. While forming compound words in Armenian –ւոնց suffix is also found. In both languages «home» is connected to certain adjectives and verbs, in Armenian some verbs acquire metaphorical meaning with the word «home».